

Ուրուագիծ Զէյթունի Պատմութեան^(*)

ԱՐԱՄ ԾՕՐՎՕՂԼԵԱՆ

*ԶԵՅԹՈՒՆԻ ԱՆՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ՝
ԸՍՏ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ ՀԵՂԻՆԱԿՆԵՐՈՒՆ*

1862 թ.ին, Աղիզ Փաշայի պատերազմէն վերջն է որ Զէյթուն ուշադրութիւն դրաւ: Իսկ 1895 թ.ի պատերազմին, զէյթունցիներու փառաւոր յաղթանակը ողջ հայութեան կողմէ անչափ ոգեւորութեամբ դիմաւորուեցաւ: Նոյն խանդավառութեամբ է որ, երբ 1896 թ.ի Յունուարին Ալաաի արտասահման անցաւ, Նուպար Փաշան զայն Փարիզ հրաւիրեց, հովանաւորութեանը տակ առաւ եւ անոր պատուիրեց գրել Զէյթունի պատմութիւնը:

(*) Այս յօդուածին հեղինակը, Արամ Ծօրվօղլեան, բնիկ զէյթունցի, որ իր մանկութիւնն ու պատմութիւնը անցուցած է հայրենի քաղաքին մէջ, եւ ընտանեկան պարագաներու բերումով նաեւ մօտէն ծանօթացած է Զէյթունի ղեկավար շրջանակի առօրեային, հասարակական կեանքին մէջ տիրող փոխադարձութիւններուն, ամբողջ կեանք մը մտքած է հետեւելով Զէյթունի պատմագրութեան արձանագրած զարգացումին եւ անոր առնչուած հարցերուն: Հեղինակը, վերջին քառասուն տարիներու ընթացքին աւելի քան երեսուն յօդուած ստորագրած է սփիւռքահայ մամուլի էջերուն մէջ, գլխաւորաբար անդրադառնալով Զէյթունի պատմագրութեան արժարժած հարցերուն, եւ իր բնիկ քաղաքին վերջին անցուդարձերուն, Ա. Ս. Ս., Արշակ, Ա. Ս. Վահանեան, Ա. Շ., Արամ Ս. Ծօրվօղլեան ստորագրութիւններով: Ակամաստեի ծանօթութեամբ եւ վկայութիւններով հարուստ էն հեղինակին այս յօդուածը, վստահօրէն պիտի մպաստէ աւելի մօտէն ծանօթանալու Զէյթունի պատմագրութեան հարցերուն, բայց մնաւանդ՝ անոր տեղագրութեան ու հասարակական կեանքին:

Զէյթունի մասին ցարդ հրատարակուած ուսումնասիրութեանց համար տես այս յօդուածի վերջաւորութիւնը:

ԽՄԲ.

Աղասի եւ ընկերները 1895 թ.ի Սեպտեմբերի վերջերը եկած էին Ձէյթուն, երբ դէպքերը սկսած եւ կառավարութեան հետ յարաբերութիւնները խիստ լարուած էին: Պատերազմէն ետք, 1896 թ.ի Յունուարին, օտար հիւպատոսներու երաշխաւորութեամբ անոնք անցան արտասահման: Այդքան կարճ ժամանակի ընթացքին, պատերազմական դործողութեանց թոհուրոհին, ձիւն-ձմրան, տիւ ու դիշեր, ամէն տեսակ զէնքերու մղձաւանջային որոտումներուն տակ, մարդ ի՞նչպէս կրնար պատմութիւն գրելու մասին մտածել, երբ պատերազմին ելքն ալ յայտնի չէր: Աղասին՝ օտարական, որոշ օթեւան մըն ալ չունէր: Աւելին, երբ նկատի առնուի, պատերազմական դործողութեանց մէջ իր սնամիտ յաւակնոտութիւնը, յստակ կ'ըլլայ թէ, Փաշայէն պատուէր ստանալէն ետք իր ծանօթութիւնները դուրսէն քաղած է: Այս մասին ոչ մէկ յիշատակութիւն կատարած է:

Մնացական Սէմէրճեան Ձէյթունցի է: 1862 թ.ի պատերազմին Ձէյթուն եղած է: Անկէ ետք որպէս ուսուցիչ մօտակայ գիւղերու մէջ պաշտօնավարած է: Բարդղղիմէոս Մ. Վրդ. իր գիրքին մէջ կ'ըսէ թէ 1897 թ.ին իրեն հետ Մ. Սէմէրճեան ալ կը գտնուէր Իդիպոս: Զրոյցի մ'ատեն, Սէմէրճեան ըսած է որ «Ձէյթունի Անցեալէն եւ Ներկայէն» գիրքին ձեռագիրները պատրաստ են, բայց տպել տալու միջոցները կը պակսին: Վարդապետին թելադրութեամբ, Սէմէրճեան դիմած է Խրիմեան Հայրիկին: Հայրիկին օժանդակութեամբ Ա. հատորը տպուած է Վիեննա, 1900 թ.ին:

1897 թ.ին տպուած է նաեւ Gli Armeni E Zeitoun, Անաթոլիոյ Լաթինոյի, Ձէյթուն հաշտութեան համար եկող իտալական հիւպատոսին գիրքը՝ իտալերէն: «Ձէյթունի Պատմագիրք»ին հեղինակներէն, Արիս Ահարոնեան կ'ըսէ թէ՝ հայրը եղած է իտալական հիւպատոսին տեղեկութիւններ հայթայթողը: Նայած հօրը, Յովհաննէս Ահարոնեանի տարիքին եւ գիրքին, հաւանական չէ այս վկայութիւնը: Հիւպատոսը շատ ծեր, կարճ ժամանակ մնաց Ձէյթուն եւ հազիւ կրցաւ մասնակցել հաշտութեան բանակցութիւններուն: Տեղին է շեշտել, թէ անիկա շատ խոր կերպով տպաւորուած էր Ձէյթունի հերոսութենէն:

Ուրեմն 1897 թ.ին, Աղասին եւ հիւպատոսին գիրքերը տըպուած ատեն, Սէմէրճեանին ալ ձեռագիրները պատրաստ եղած են: Ասկից կը պարզուի որ երկուքին ալ սկզբնաղբիւրը, աւանդական, բերանացի պատմութիւնը եղած է: Այս երկուքն ալ Ձէյթունի հիմնադրութեան համար նոյն տեսակէտն ունին եւ զայն կը կապեն Ձէյթունի բերդին:

Անուան շուրջ, Աղասին կը կարծէ թէ, Ձէյթունի շրջակայքը ձիթենիի շատ ծառեր գտնուելուն, Ձէյթուն անունը ատկից յառաջ

եկած է: Olive, ձիթենի, աղաւաղուելով եղած է Ուլնիա: Olive, Ուլնիա չի կրնար ըլլալ: Ուլնիա եւ Ձէյթուն իրարմէ տարբեր եւ հեռու քաղաքներ են: Ուլնիան, Ֆոնուզն է, որ հին մատենագրութեան մէջն ալ, նախքան խաչակիրներուն դալը, յաճախ կը յիշուի: Սէմէրճեան իրաւամբ կը հակառակի այս տեսակէտին, եւ արդարօրէն կը պնդէ, թէ Ձէյթունի շուրջ ոեւէ ատեն ձիթենիներ չեն եղած: Ձէյթունի ցուրտ կլիման ձիթենիի համար խիստ անյարմար էր: Ըստ Սէմէրճեանի, Ձէյթուն անունը, Ձէյթունի բերդատէրերէն Սէթին անունով, Սէթին երթանք, Սէթին, Ձէթուն, Ձէյթուն եղած է: Այս բացատրութիւնն ալ կամայական է եւ գիտական չէ:

Այս երկուքէն ետք, հետագայ բոլոր հրատարակութիւններուն մէջ, մէկուն կամ միւսին տեսակէտները կրկնուած են:

ԳԻՏԱԿԱՆ ԱՌԵԼԻ ՀԱՍՏԱՏՈՒՆ ՏՈՒԵԱԼՆԵՐ

Փոխանակ կարծեցեալ բերդի մը, իշխանի մը կամ ձորի մը անունով ստուգարանելու Ձէյթունի հիմնագրութիւնն ու անուան ծագումը, պէտք է աւելի հիմնական, գիտական եւ պատմական տուեալները նկատի առնել: Ասոնցմէ կարելի է քննել հետեւեալները: 1.— Կիւռեստինի բերդը. 2.— Պեռիտ լեռան երկաթի հանքերը. 3.— Քաղաքին՝ Գեղ, դարերէ ի վեր հոսող բարբառը՝ գեղացիներէն. 4.— Գեղին (Ձէյթուն) շինութեան յառաջընթացը. 5.— Հասարակական կեանքին կառոյցը:

ԿԻՒՌԵՏԻՆԻ ԲԵՐԴԸ

Գեղացիք (ղէյթունցիք) դայն Կիւռեստինօ Գալէ կը կոչեն: Թիւրքերը՝ Կիւրեստին Գալասը, արարները՝ Ֆարսիքէ: Կիւրիկեան մատենագրութեան մէջ յաճախ յիշուած է Բարձր բերդն կամ դըղեակն Բարձր: Հայ բանասէրներ դայն շփոթած են Արեւմտեան լեռնային Կիւրիկոյ Լամբրոնի մօտ գտնուող Բարձրաբերդին հետ:

Կիւռեստինի բերդը կը գտնուի, Կիւրիկեան իշխանութեան օրով կարեւորութեամբ շեշտուած Արեգէն գաւառակին մէջ: Բերդէն չորսուական ժամ հեռու, դէպի արեւելք կը գտնուի Ձէյթունը, դէպի հիւսիս արեւմուտք՝ Ուլնիան (Ֆոնուզ), դէպի հարաւ արեւմուտք՝ Այգեկակը (Եֆնիճէ Գալէ):

Կիւռեստինի բերդին արեւելեան կողմը, ճիշդ դէմը կը գտնուի աւելի բարձր Այի Գայան — Կիւրիկեան մատենագրութեան մէջ յիշուած Ժայռն Բարձրը, միազանգուած հսկայ ժայռալեռը: Այս երկուքին մէջտեղէն կը հոսի Ձէյթունի գետակն, որուն նախապէս Անիձորի եւ Անաուլի ջուրերը խառնուած են: Հոս գետը բերդին ա-

նունով կը կոչուի Կիւռետինի գետ: Գետին ձախ կողմը, Կիւռետինի բերդը, ուղղաձիգ միակտոր 4-500 մեթր բարձրութեամբ ժայռապատ մըն է: Աջ կողմը, Ժայռն Բարձր, մեղմ զառիվերով ժայռասար մըն է: Ժայռն Բարձրի կողէն, գետեզերքէն 250-300 մեթր բարձրէն կ'անցնի Մարաշէն-Ձէյթուն Վարի Ճամբան: Այս ճամբան, մերկ ժայռին վրայ, շատ վտանգաւոր է: Պզտիկ անուշադրութեամբ սայթաքում մը, մինչեւ գետը դլորուելու կամ ժայռերու վրայ ջախջախուելու պատճառ կ'ըլլայ: Հոս գետը շատ խորունկ է. ջուրը յստակ եւ այնքան հանդարտ որ գետին ինչ ուղղութեամբ հոսիլը յայտնի չ'ըլլար: Գետեզերքը՝ կիրճին լայնքը 5-10 մեթր է. աւելի վեր, ճամբուն անցած տեղը, 60-100 մեթր: Կիրճին երկարութիւնը՝ 40-50 վայրկեան, իսկ նեղ, դժուարագոյն մասը՝ 15-20 վայրկեան կը տեւէ: Այս մասը ամէն կարգի ուղեւորներ, նոյն իսկ կանաչք եւ հեծեւաղօրք, հետիոտն կ'անցնին: Ժայռն Բարձրին կատարը աւելի բարձր, անմատչելի է:

Կիւռետինի բերդին մուտքը հիւսիս արեւմտեան կողմէ, Ղուրայի մօտէն է: Յից զառիվերերէ, ուրապատոյտ, ժայռոտ եւ խիտ մացառուտ անտառին մէջէն նեղ արահետներէ բարձրանալով կարելի է հասնիլ մուտքին: Օտար մը, կամ այդ թնճկոտ անցքերուն անծանօթ մը, անկարելի է որ դտնէ անցքերը: Ղուրայէն դէպի արեւմուտք եւ հարաւ, բերդին փէշերուն, հսկայ ժայռերու արանքին կան մեծ ու պզտիկ տասնեակ քարայրներ, շատերուն խորքը անծանօթ: Այս կողմերէն ալ դէպի բերդին կատարը շրջանակի ժայռապատ մըն է, որմէ մողէզները հազիւ սողալով կրնան վեր բարձրանալ: Բերդին կատարը շատ ընդարձակ է: Կարծես ձեռակերտ շինուած պարիսպ մ'ըլլար, շուրջ բոլորը 5-10 մեթր ժայռապատ, որուն ճեղքուածքներէն կարելի է դուրսի անցուղարձները դիտել: Գետինը տափակ սալաքարերով ծածկուած է: Արեւմուտքէն դէպի արեւելք կը հոսի զուլալ ջուրով մեծ առու մը, որ ամառն ալ չի ցամքիր: Առուին եզերքը կան ուռիի եւ սօսիի ծառեր, մնացեալ մասը մացառներով ծածկուած է: Տեղ-տեղ կան հսկայ քարեր: Առուակին ափին կան շինութեանց աւերակներ, կիսաքանդ հաստ որմեր: Այս բերդին վրայ հազարաւոր ընտանիքներ կրնան պատուարուիլ: Բերդին կատարը սկաւառակաձեւ է եւ տրամագիծը 40-50 վայրկեան, շուրջ բոլորը պարսպանման ժայռերուն ստորոտը կարելի է ապաստանիլ, անձրեւէն, արեւէն պաշտպանուելու համար: Եթէ որոշ պաշար ունենան, ոչ թէ հին, այլ արդիական ամենէն զօրաւոր զէնքերուն համար վայրը կը մնայ անմատչելի:

Կիւռետինի բերդը բարձրէն կ'իշխէ շրջապատին վրայ: Ամենէն մօտ աւելի բարձր լեռը, Շէմպէքն է, ճիշդ արեւելքը, մօտ մէկ

ու կէս ժամ հեռու: Ծուրջ բոլորը կան բլուրներ, որոնց կողերուն եւ ձորակներուն մէջ կը մշակուին ամէն տեսակ արմատիք, ծխախոտ, բամպակ եւ պտուղներ: Նոյնպէս կը խնամուին կաթնատու եւ մսացու կենդանիներ: Հոչակաւոր են կովերը: Տեղական պէտքէն աւելին կը վաճառուի Զէյթունի շուկան, մաս մըն ալ Մարաշ: Ծէմպէքի արեւմտեան ստորոտէն մինչեւ կատարը, դանդուռ մազերու նման կոհակ առ կոհակ բլուրներու լայն ծալքերուն փռուած այգիներուն մէջ տասնեակ տեսակ ընտիր խաղողներ կը մշակուին: Ծէմպէքի կատարին մօտ է Խնպի գիւղը, թրքերէն «Ֆէնիկ», հաւանաբար՝ «Վանք»ի աղաւաղովը, ուր կան հին շինութեանց աւերակներ: Ասիկա Արեգէնի ամենէն մեծ գիւղն է: Կիւտեսիւնի շուրջ բոլորը, Արեգէնու ընդհանուր անունին տակ կան շատ մը գիւղեր, Անդերէս-սենք, Մալենք, Ալապողանենք, Գալստենք, Պեհլիսիլենք, Գարամանուկենք, 15-50 տուն մեծութեամբ: Կան 3-5 տնոտր շէներ, աղարակներ: Արդէն ամբողջ Արեգէնը, ինքնին ընդարձակ աղարակ մըն է, ուր խոպան ափ մը տարածութեամբ հող չկայ:

Կիւտեսիւնի բերդէն մինչեւ մէկուկէս օր հեռու, դէպի արեւելք, հիւսիս, արեւմուտք եւ հարաւ, հեռաւոր հորիզոնին վրայ կը տեսնուին Պեռիտի, Պերջնկայի, Սանդուխի, Ընկուզակի, Ախըր տաղի, Եւփլանի, Այգեկակի, Ուլնիոյ, Աւադկալի, Սօլադ Տէտէյի բարձր կատարներն ու բերդին նայող կողերը: Այս բարձր կատարներով շրջանակուած ընդարձակ աւազանին ճիշդ մէջտեղը պորտի պէս բարձրացած բերդը անդուգական տիրակալան մըն է: Լեռնականներու սրտես, արծուային աչքերէն չի խուսափիր ոչ մէկ շարժում:

Կարծեմ Կիւտեսիւնի բերդին ամենէն խորհրդաւոր ու զարմանահրաշ բանը՝ դադտնի դուռն է: Դուրայի կողմի մուտքին ճիշդ հանդիպակաց կողմը, պարսպանման ժայռերու ծերպերուն մէջէն բացուած շատ նեղ անցք մը կայ: Անկից մարդ մէջըը երկուքի ծալած, քովնտի կրնայ անցնիլ: Այս ճեղքուածք-դռնէն շատ զգուշութեամբ կարելի է անցնիլ: Այս դրան սեմէն վար ձիւ խորխորատ մըն է, մինչեւ գետեղբեր: Սեմին ճիշդ դէմը, 50-60 սմ. բացուածքէն միւս կողմ ցից զառիվար մը կայ: Սեմէն արագ ու ճկուն ոստումով ցատկելէ ետք, ոտքը հազիւ գետին դպած, արագ եւ հաւասարակշռութիւնը պահելով պէտք է ցից զառիվարը իջնել: Պղտիկ սխալ մը պատճառ կրնայ ըլլալ յատակը՝ գետին մէջ խեղդուելու կամ թաւալելուր ջարդուփշուր ըլլալու:

Ռուբինեանք գիտցած են պաշտպանողական-ապրմական բացառիկ արժէքը այս բնական բերդին: Անկասկած անոնցմէ առաջ ուրիշներ, գուցէ անյիշատակ դարերէ ի վեր այդ արդաւանդ դա-

ւառակին մէջ ապրող ժողովուրդներ, ինչպէս նաեւ հեթացիք ու հայասացիք օգտուած են այս բերդին եւ շրջակայքին բոլոր առաւելութիւններէն:

ՊԵՌՏ ԼԵՐԱՆ ԵՐԿԱԹԻ ՀԱՆՔԵՐԸ

Համաշխարհային մշակոյթի պատմութենէն դիտենք որ երկաթը առաջին անգամ յայտնուեցաւ Ալեքսանտրէթի Ծոցին յետնաշխարհին – Hinter land – խորերը, հեթացիք երկաթի շնորհիւ ընդարձակեցին իրենց կայսրութիւնը: Անոնք ամէն կողմ, մինչեւ Եգիպտոս երկաթ կ'արտածէին: Յոյները երկաթը հայկական–արմենական մետաղ կը կոչէին: Հեթացիք եւ յոյներ երկաթի հանքերուն վայրը չեն յիշած: Անառարկելի իրողութիւն է որ գեղացիք զէյթունցիք դարեր շարունակ բանեցուցած են Պեռիտ լեռան երկաթի հանքերը: Միջին դարուն սկիզբը, նախքան շուետական երկաթին Թուրքիա մուտքը, գեղացի կարաւաններ, այդ ընտիր երկաթը կը փոխադրէին Օսմ. կայսրութեան բոլոր կողմերը, մինչեւ Հալէպ, Դամասկոս, Պաղտատ, Կարին, Կեսարիա: Մեր օրերուն ալ քաղաքին մէջ գործածուած երկաթն ու պողպատը տեղական էր: Շրջակայ քաղաքներուն մէջ, մինչեւ Հալէպ, շատ յարգի էին գեղացի վարպետ դարբիններուն շինած գործիքները:

Պեռիտ սահմանակից էր հեթացուց եւ Հայաստանի երկիրներուն, գուցէ մերթ ընդ մերթ մէկին կամ միւսին ենթարկուած: Պեռիտի երկաթի հանքերուն խորութիւնն ու տարածութիւնը, կը վերջապէս թէ անիկա անյիշատակ դարերէ ի վեր շահագործուած է: Հին սեպագիր արձանագրութեանց, հայկական կամ օտար մատենադրութեանց մէջ ցարդ Պեռիտի երկաթին մասին որեւէ յիշատակութեան չգոյութիւնը, թէպէտեւ անըմբռնելի, երբեք չի ժխտեր այդ հանքերուն գոյութիւնը եւ գեղացիներու կողմէ անոնց շահագործուած ըլլալու իրականութիւնը:

ՁԵՅԹՈՒՆՑԻՆԵՐՈՒ ԳԵՂԱՑԻՆԵՐՈՒ ԼԵՁՈՒՆ, ԳԵՂԱՑԵՐԻՆԸ

Մեր մէջ ամենէն հմուտ ճանչցուած բարբառագէտը, անկասկած Հրաչեայ Աճառեանն է: Ուրիշներու կարգին, Ձէյթունի բարբառին մասին ալ գրած է ան: Աճառեան ըստ իր յուշերուն, Կեդրոնական Վարժարանի ուսանողութեան շրջանին, զէյթունցի ուսանող Յարութիւն Չաղբրեանէն քաղած է իր ծանօթութիւնները: Աճառեանին լեզուագիտութեան եւ տաղանդին մասին ոչ մէկ կասկած: Բայց հնարաւոր է արդեօք ուսանողի մը խօսած լեզուէն, բարբառի մը մասին լրիւ գաղափար կազմելը, մանաւանդ՝ Աճառեան ալ

ուսանող, լեզուադիտութեան մէջ դեռ չէր մասնագիտացած: Լաւադոյն պարագային, տեսական ընդհանուր գաղափար մը կրնար կազմել: Տաղանդաւոր լեզուաբանը լոկ այդ ըրած է:

Ասկէ զատ գեղացերէնի մասին գիտական լուրջ ուսումնասիրութիւն չէ եղած: Ամերիկացի միսիոնարներու Սուրբ Գրոց ընկերութիւնը (Bible House), Սբ. Գրքէն մաս մը Զէյթունի լեզուով հրատարակած է: Ատիկա շատ խորթ է: Զէյթունի մասին գրուած դիրքերուն մէջ, քերականական հակիրճ ծանօթութիւններ, առականերէն, առածներէն, օրհնութիւններէն, անէծքներէն բառամթերքի նմոյշներ եւ կարճ պատմուածքներ յիշուած են: Ասոնց ոչ մէկը բաւարար ու հարազատ է: Որովհետեւ գեղացերէնը կարեւր չէ գրեւ նոյնիսկ այնքան հարուստ հայերէն այբուբենով, քանի որ,

ա. Գեղացերէնի մէջ հայերէն ձայնաւորները տարբեր երանգաւորումով կը հնչուին, կան նաեւ բաղադրեալ ձայնաւորներ՝ ըա, աը, իը, եը եւլն.:

բ. Գեղացերէնի մէջ յ չկայ,

գ. Բոլոր բ-երը յ կը հնչուին (ասիկա կարեւոր երեւոյթ մըն է եւ կը կարօտի լուրջ ուսումնասիրութեան),

դ. Հայերէնի բոլոր ո-երը զօրաւոր կերպով կը հնչուին, նոյնիսկ խոնարհումի առեն կը պահեն իրենց ինքնութիւնը: Աշխարհաբար՝ դուռ-դրամ, լեռ-լեւրամ, ձմեռ-ձմրամ. գեղացերէն՝ դոռ-դոռոն, լեռ-լեռոն, ձմեռ-ձմռոն,

ե. Գեղացերէնի մէջ կիսաւանկ չկայ. մկրատ, մոկյոտ, Մկըրտիչ-Մըակէրտիչ, քմամալ-քմմամալ, լսել-լըսիլ,

զ. Հայերէնի մէջ բաց է չկայ (թրքերէն՝ եփմէփ, անգլերէն՝ մէմ): Գեղացերէնի մէջ բաց է-ի եւ գոցի զանազանութիւնը յստակ է: Բաց է-ով կը հնչուին մայր-մէյ, գայլ-գէլ եւլն.,

է. Խոնարհումի մէջ գեղացերէն ներկան եւ ապառնին երկու ձեւ ունին. աշխարհաբար՝ կու գամ, գեղացերէն՝ 1) կու գոմ, 2) կօ գոմ (գործողութեան վրայ), ինչպէս անգլերէնի մէջ՝ 1) I come, 2) I am coming, եւ թրքերէնի մէջ՝ կէլիքիմ, 2) կէլիյառում: Երկրորդ ձեւին համար պոլսահայերը կոք (կու գամ կոր) ձեւը փորձեցին, ինչ որ կը նշանակէ թէ անհրաժեշտութիւնը զգացուած էր: Աշխարհաբար ապառնի՝ պիտի գամ, գեղացերէն՝ 1) պի գոմ, 2) պի-տի գոմ: Պի գոմ՝ կամայական ձեւ է, գուցէ չգայ ալ, բայց պիտի գոմ, բացարձակ, ինչ ալ ըլլայ պիտի գամ կը նշանակէ:

բ. Բարդ բառերու կազմութեան պարագային, յաճախ չաղկապ գիրը կը կորսուի. աշխարհաբար՝ քարէ պատ, գարնամ ակ, խա-

նութի քար, գեղացերէն՝ քայաօտ, գայնոկ, խամք գօյ (դանակ, ուրազ, եւ այլ սրածայր գործիքներ սրելու համար) :

Գեղացերէնի առողջանութիւնը շատ յստակ է : Բոլոր բաղաձայները, մանաւանդ նմանաձայները շատ յստակ կը հնչուին ու կը զանազանուին : Շարահիւսութիւնն ալ աշխարհաբարէն եւ դրաբարէն կը տարբերի :

Գեղացերէն կը խօսին Կիւռեստինի բերդին շուրջ բոլոր գիւղացիք՝ արեգէնցիք, աւաղկացիք, խնպիցիք, Զերմուկի դաշտի, և Սբ. Փրկիչ վանքի գիւղացիք եւ գեղացիք (գէյթունցիք) : Գեղացերէնի հարազատութեան առաջին պայմանը, «ը» գիրը «յ» հնչելն է : Ունիս-Ֆոնոլոգ եւ շրջակայից բարբառը գեղացերէնէն տարբեր է : Անոնք «ը»երը ճիշդ «ը» կը հնչեն : Անշուշտ գեղացերէնի «ը»ի պարզան պատահական երեւոյթ մը չէ : Ինչ ալ եղած ըլլայ ասոր պատճառը, իրականութիւնը այն է, որ գեղացերէն խօսող ժողովուրդը, դարերէ ի վեր գոյութիւնը շարունակած է :

ԳԵՂԸ (ԶԵՅԹՈՒՆ)

Զէյթունցիք եւ շրջակայ հայ գիւղացիք, Զէյթունը մինչեւ այսօր ալ Գեղ կը կոչեն : Մինչ այլ գիւղեր, նոյն իսկ 5-10 տուն շէնքերն ու աւանները իրենց ուրոյն անուններով կը կոչուին : Ասկից կը հետեւցուի թէ, գեղացիք մօտիկ քաղաքի մը կապակցութեամբ Գեղ (գիւղ) անուանած են : Ակնարկուած քաղաքը, Զէյթունէն 12 ժամ հիւսիսը՝ Ալպիսթանը, կամ նոյն հեռաւորութեամբ հարաւը՝ Մարաշը չի կրնար ըլլալ : Այդ քաղաքը աւելի մօտ ըլլալու էր Գեղին : Զէյթունէն 40-50 վայրկեան հեռու, հարաւային կողմը, Զերմուկի տաք աւազանէն քիչ վար Շիյէնօկ կոչուած աւերակները կան : Այդ ըլլալու է ակնարկուած քաղաքը : Ըստ աւանդութեան, Բարթողիմէոս առաքեալը այդ քաղաքը հանդիպած եւ քրիստոնէութիւն քարոզած է : Բնակիչներէն հալածուելով, քաղաքին վերը գտնուող աղբիւրին քովի ծառերուն մէջ ապաստանած է : Յաջորդ օր քաղաքին բնակիչները բորոտութենէ վարակուած են : Քաղաքացիներ, այս աղէտը պատիժ նկատելով, առաքեալը կը փնտռեն ու իր թաքստոցին մէջ կը գտնեն : Շղելութիւնը կը պատմեն, մեղայի կու գան ու կը խնդրեն որ դարման մը գտնէ : Սուրբը բորոտները աղբիւրին քով կը հրաւիրէ : Անոնք կը լուացուին ու կը բուժուին : Այս տեսնելով, բոլորը քրիստոնէութիւնը կ'ընդունին : Առաքեալը աղբիւրին ջուրով կը մկրտէ զանոնք : Աղբիւրը Ս. Փրկիչ կ'անուանեն, վրան ալ եկեղեցի կը շէնեն :

Զէյթունցիք կրօնական ակնածանք ունէին Ս. Փրկիչին հանդէպ: Տարուան բոլոր եղանակներուն ուխտի կ'երթային մուրազատուր այս վանքին: Հիւանդներ սառն ջուրին մէջ լողնալով կը բուժուէին: 1895 թ.ի պատերազմին թուրքեր քանդեցին Ս. Փրկիչը: Հինէն ի վեր, զէյթունցիք Ս. Փրկիչը ամենազօր կը նկատէին, եւ յանուն Ս. Փրկիչի, կը նետուէին վտանգաւոր կռիւներու մէջ: Տեղին է յիշել, թէ Մարաշի հիւսիսային կողմն ալ, բարձր բլուրի մը վրայ կար քարայր ճղնարան մը: Մարաշցիներ զայն դարձարագօլ կը կոչէին: Բանասէրներ կը պնդեն, թէ Թադէոս Առաքեալի անուան աղաւղովմն է այդ: Ըստ աւանդութեան, Թադէոս Առաքեալ քրիստոնէութիւնը քարոզելով Մարաշ ալ հանդիպած եւ այդ ճղնարանին մէջ բնակած է: Այս զոյգ աւանդութիւններէն կարելի է եզրակացնել, որ քրիստոնէութեան առաջին դարուն այդ շրջաններուն մէջ հայեր յոյնուած են:

Ջերմուկի մօտ գտնուող աւերակները, զեղացիք Շիյէճօկ կ'անուանէին: Գիտական չէ ոմանց այն կարծիքը, թէ Շիյէճօկ՝ թուրքերէն «Շէհիրճիք» (պղտիկ քաղաք) աղաւղովմն է: Ոմանք ալ հին մատենադրութեանց մէջ յիշուած Անէ, Կոստանդնյա քաղաք, Յուլիապոլիս վայրը չկարենալով ստուգել, կ'ենթադրեն թէ Շիյէճօկն ըլլալու է այդ անուամբ կոչուած քաղաքը: Յամենայն դէպս, սա որոշ է, որ Շիյէճօկի տեղ նախապէս քաղաք մը գտնուած է, եւ զեղացիք այդ քաղաքին կապուածութեամբ Զէյթունը Գեղ կոչած են: Նոյնպէս պէտք է ընդունիլ, որ հին քաղաքաշինութեան կամ գիւղաշինութեան տուեալները նկատի առնելով, շրջանին մէջ Շիյէճօկէն յարմար վայր մը չկայ: Ջերմուկի տաք ջուրերը Ս. Փրկիչին առատ ու զուլալ ջուրը, տեղւոյն ընդարձակութիւնը այս կը փաստեն:

ՀԱՍՍՐԱԿԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՆ ԿԱՌՈՅՑԸ

Հասարակական-կառավարական ծանօթ ձեւերէն՝ — նահապետական, աւատապետական, նախարարական, միապետական, սահմանադրական, ռամկապետական, իշխանապետական, դաշնակցային — բոլորովին տարբեր էր: Անոր նմանին չենք հանդիպիր, ո՛չ մեր, ո՛չ ալ ուրիշ ժողովուրդներու պատմութեան մէջ: Ասոր համար ալ արժանի է մասնաւոր կարեւորութեան եւ ուշադիր քննութեան: Մինչեւ 1862 թ.ը, Զէյթուն բացարձակապէս օտար տիրապետութեան չէ ենթարկուած: Զէյթունը կառավարած են չորս թաղերու չորս իշխանները: Թաղերն ալ իշխաններու տոհմային անունով յիշուած են: Եաղուպեան, Շօրվօղլեան, երկուքը միասին առած, Վարիթաղ, Սուրէնեան, Նորաշխարհեան, այս երկուքն ալ Վերի թաղ:

Իշխանութիւնը ժառանգական եղած է: Իշխանին մահէն ետք, անդրանիկ զաւակը կ'ըլլար իշխան: Իշխան ըլլալը, պատուակալ պաշտօն էր: Նիւթականէն աւելի, անձնական արժանիքները, մաքաշտօն էր: Նիւթականէն լաւագոյնս ծառայելու յատկութիւնքուր կենցաղը, թաղեցիներուն լաւագոյնս ծառայելու յատկութիւնքուր նկատի կ'առնուէին: Իշխանը թաղին դատաւորը, խնամակալը, լիբրին հրմանատարը եւ հայրն էր: Գուցէ այս պատճառով է, որ Թոթոյան, մրցակցութիւն, դաւ ու ոտնձգութիւն չէ պատահած երբեք: Աւելին՝ երբ թաղին մէջ այս յատկութիւններով աւելի բարձր մէկը քաջութեամբ եւ ռազմական կարողութիւններով աւելի բարձր մէկը դառնուած է, իշխանութիւնը նախորդին յօժար կամքով եւ թաղեցիներու համակերպութեամբ անոր փոխանցուած է, ինչպէս որ եղած է Ոոյ Յակոբի պարագային: Նախկին իշխան Անդրէասեանը, սիրով հրաժարած է ի նպաստ Ոոյ Յակոբին, որմէ իշխանութիւնը փոխանցուած է Եղուպեանին, Յակոբին անունով:

Իշխանը կը լուծէր թաղեցիներու միջևե պատահած որեւէ վէճ։ Ան նիւթապէս կ'օգնէր թաղեցիներէն՝ կարօտեալներուն։ Պատերազմի ժամանակ իշխանը կ'առաջնորդէր թաղին ռազմիկները ռազմաճակատ։ Թաղեցիներ սիրով կ'ենթարկուէին իշխանին բոլոր կարգադրութիւններուն։ Կ'անկաթէին անկէ, կը սերէին ու կը յարգէին զայն։ Ասոր համար է, որ ոստիկան, թիկնապահ, պաշտօնեայ չէր ունենար իշխանը։ Իշխանը իր վարչական գործերուն մէջ բացարձակ անկախ ըլլալով հանդերձ, պարագաներուն համեմատ, թաղին մէկ կամ աւելի երեւելիներուն հետ կը խորհրդակցէր։ Թաղեցի երեւելիներուն համար ասիկա մեծ պատիւ մը կը համարուէր եւ օրուան որեւէ մէկ ժամուն անմիջապէս կոչնականը կը ներկայանար իշխանին։ Իշխանին եւ աւագանիին միջևե խորհրդակցութիւնները ազատ եւ անկաշկանդ կ'ըլլային։ Միւսներուն տեսակէտները իմանալէն ետք, վերջնական որոշումը իշխանը կու տար։ Բոլորն ալ, նոյն իսկ տարակարծիքները, սիրով կ'ընդունէին տրուած որոշումները։

Իշխանին, ինչպէս աւագանիին, տուներուն դռները միշտ բաց կ'ըլլային: Ուեւէ մէկը, ուղած պահուն կը ներկայանար իշխանին «օտան» (սենեակ, պաշտօնատուն): Ամէն իրիկուն, մանաւանդ ձմեռը, թաղեցիներ «օտան» կը հաւաքուէին. մինչեւ ուշ գիշեր, օրուան կացութեան եւ դէպքերուն շուրջ կը խօսակցէին: Անձնական դործի, շահ ու վայելքի մասին խօսելը ամօթ էր: Միշտ ալ դըլխաւոր նիւթը պատերազմներու եւ հերոսներու քաջաբերութեանց շուրջ կը դառնար, թաղի երեւելիներուն օտաններուն դըրութիւնն ալ նոյնն էր:

Իշխանը թոշակաւոր պաշտօնեայ կամ սպասաւոր չէր ունենար: Իր զաւակներէն մեծերը, կամ դերդաստանին երիտասարդներէն մէկ քանին, միշտ ներկայ եւ պատրաստ կ'ըլլային որեւէ պատուէր կատարելու համար: Թաղին համեստ ընտանիքներէն կիներ եւ տղամարդիկ կը կատարէին իշխանին տնային գործերը: Ասոնց ալ թոշակ չէր վճարուէր: Իշխանը կը հոգար նմաններուն տարեկան պարէնն ու այլ կարիքները: Բոլոր թաղեցիները պարտականութիւն եւ պատիւ կը համարէին իշխանին ծառայելը: Առաջինը՝ իշխանին դերդաստանը, ապա՝ թաղին միւս երեւելիները, իշխանին ցուցմունքներուն վրայ, կ'օժանդակէին թաղեցիներէն պէտք ունեցողներուն, այնպիսի կերպերով, որ չվիրաւորուէին անոնց արժանապատուութիւնը: Թաղեցիներ, իրենց ամէն կարգի բերքերէն իշխանին տունը նուէր-արմաղան ղրկելը մեծ պատիւ կը համարէին: Ասոնց ալ յաւելեալ մասը կը բաժնուէր թաղեցի չքաւորներուն եւ ծառայողներուն: Ասոր համար թաղեցիական կապը շատ զօրաւոր էր:

Իշխաններէն ոչ մէկը, թաղեցիներէն կամ գիւղացիներէն ոչ մէկ տեսակի աուրք կը դանձէր: Ոչ մէկ իշխան, միւս թաղերուն ներքին գործերուն կը միջամտէր: Արտաքին յարաբերութեանց մէջն ալ, նոյնիսկ դրացի թուրք գիւղացիներու եւ աւատապետերուն հետ, իշխանը ուղած ձեւով կը վարուէր: Շրջանի թուրք ցեղապետերը, ի շահ իշխանին բարեկամութեան, ամէն տեսակ ընտիր եւ առատ նուէրներով կ'ողողէին իշխանին տունը: Շատ կարեւոր հարցերու, գլխաւորը՝ պատերազմի պարագային, չորս իշխանները խորհրդակցաբար որոշումներ կ'առնէին:

Անակնկալ որեւէ դէպքի պարագային, եթէ որեւէ զէյթունցի թուրքերուն կողմէ յարձակումի ենթարկուէր, նոյն կամ ուրիշ թաղեցիներ օգնութեան կը փութային, շատ անգամ ալ աւելիով կը հատուցանէին, վրէժ լուծելով նախայարձակէն:

Զէյթունի պատմութեան ամենէն հիւսնայի երեւոյթը այն է, թէ՛ ոչ մէկ իշխան որեւէ ատեն, սեփական շահուն կամ փառասիրութեան համար զոհած է ընդհանուրին, զէյթունցի ժողովուրդին շահը: Թուրքը, շատ տեղեր, խորամանկութեամբ, խաբեբայութեամբ եւ շուայլ խոստումներով, արիւնակից ցեղերու միջեւ իսկ երկպառակութիւն ձգած, բաժան բաժան ըրած եւ տիրած է անոնց վրայ: Թուրքը, քանի քանի անգամներ նոյնը փորձած է Զէյթունի մէջ, բայց միշտ ալ ձախողած է: Զէյթունցին, իշխաններու օրով երբեք չէ խաբուած թուրքէն: Ոչ մէկ դաւաճանական դէպք պատահած է: Թաղեցիներ, սէր, յարգանք եւ պատկառանք ունեցած են իշխաններուն հանդէպ, ամրացնելով անոնց դիրքը արտաքին յարաբերութեանց մէջ: Իշխաններուն այս միասնականութիւնը, մանա-

ւանդ արտաքին թշնամիներու եւ թուրքին դէմ, հայոց պատմութեան խիստ գեղեցիկ եւ եղակի իրողութիւնն է:

Զէյթունի ոչ մէկ իշխան, առանձին, կամ միւսներէն ոեւէ մէկուն հետ գործակցաբար, ոչ ալ բոլորը միասին, երբեք նախա-յարձակ չեն եղած: Զէյթունի բոլոր տեսակի մեծ ու փոքր պատե-րազմները, նախայարձակին դէմ ինքնապաշտպանութիւն, վրիժա-ռութիւն կամ փոխադարձութիւն եղած են:

Արտաքին թշնամիին կողմէ ոեւէ թաղեցիին կամ իշխանին եղած վիրաւորանքին դէմ, բոլոր թաղեցիք, պահանջեալ հարկին, բոլոր զէյթունցիք միասնաբար դիմադրած են: Որովհետեւ զէյթուն-ցիին համար, անտարբերութիւնը, կրաւորականութիւնը, «ինծի ի՞նչ» մտայնութիւնը խորթ են եւ ատելի: «Մէկը բոլորին, բոլորը մէկին համար», այս եղած է անոնց քաղաքական դաւանանքը: Այս առաքինի յատկութիւնները բնածին կամ դարերու փորձառութեամբ ստացական, կը բնորոշեն Զէյթունի ժողովուրդին ցեղային յատ-կանիւնը:

Զէյթունի իշխանները ոչ մէկ դիւան կամ արձանագրութիւն ունեցած են: Անոնց ծաղումին մասին ալ ցարդ տրուած ծանօթու-թիւնները, մեծ մասամբ, քմածին կը թուին: Առաջին պատմադե-րը՝ Սէմէրճեան, ինչպէս Զէյթունի դէպքերուն եւ պատերազմնե-րուն դասաւորումը 1780 թ.էն կը սկսի, նոյնպէս իշխանական տու-ներու պատմութիւնն ալ անկէ աւելի ետ չի տանիր: Այս կը նշա-նակէ թէ ծանօթութիւնները բերանացի պատմութեանէն քաղած է: Ըստ որուն, Երզնկեան թաղի իշխանները նախապէս Անդրէաս-եանները եղած են: Յակոբի սխրագործութենէն վերջը, իշխանու-թիւնը իրմով անցած է զերդաստանին: Նորաշխարհեան թաղի իշ-խաններն ալ նախապէս Աբարթեանները եղած են: Նորաշխարհեան-ները Կապանէն դաղթելով ապաստանած են Զէյթուն, ուր բազմա-նալով ու զօրանալով, տիրացած են թաղին իշխանութեան: Այս զերդաստանին մօտ դրսեցիի դիժը, մանաւանդ Պապիկ փաշայի եւ եղբօրը՝ Նազարէթ Չափուշի վրայ, միշտ ալ վանողական եղած է իրենց եւ միւս թաղեցիներուն համար: Սուրէնեանները ամենէն հի-նը կը նկատէ, մինչդեռ բոլոր զէյթունցիք Սուրէնեանները «Բա-սիլոսեան» կ'անուանեն, որը աւելի յունականութիւն կը բուրդէ: Շօրվողեան իշխաններուն անունը ստուգաբանելով, կ'ըսէ թէ Գա-լէնտէր փաշայի պատերազմին, Զէյթուն ապաստանածներուն ամիս մը ապուր-չորպա բաժնելուն, իշխանական տունը Շօրվողեան կող-ուեցաւ: Այս մեկնութիւնն ալ կամայական է: Արդէն թուրքեր ոչ-իսլամ մեծահարուստները չօրապնը կը կոչէին, որով փոխանակ Շօրվողեանի, Չօրպաճը օղլու — Չօրպաճօղլու ըսելու էին: Ատկէ

առաջ ի՞նչ անունով կոչուելին չի յիշեր: Միայն, գերբին մէջ տեղ մը, Հաղօր իշխան Շօրվօղլեան (Վահանեան) գրած է: Փակագծի մէջ առնուած Վահանեան մականունին համար բացատրութիւն չէ տուած:

Ձէյթունի մօտակայ Արեղին եւ Աւագիւլ գիւղերն ալ, ներքին դործերու մէջ բոլորովին անկախ, քեհեային կամ աղային կողմէ կը կառավարուէին: Ասոնց հանդամանքն ալ Ձէյթունի իշխաններուն պէս էր: Ձէյթունի շուրջ գտնուող բոլոր գիւղացիները, իշխաններուն հանդէպ ոչ մէկ պարտաւորութիւն ունէին: Գիւղացիները տէրն էին իրենց ստացուածքին, ոչ աղային, ոչ Ձէյթունի իշխաններուն, եւ ո՛չ ալ կառավարութեան տուրք կը վճարէին մինչեւ 1862-ի սեւ թուականը:

Ձէյթուն քաղաքը մտնելու համար, անմիջական քովէն անցնող գետակներու վրայի 4 կամուրջներէն զատ ուրիշ կողմնակի համբայ չկար: Նորաշխարհեանենք՝ Պօղոս-Պետրոս, Շօրվօղլեանենք՝ Պաղ-Աղբիւր, Եաղուպեանենք՝ Շուղրի, Սուրէնեանենք՝ Նահատակաց կամուրջներէն ելեւմուտք կ'ընէին: Շուրջի գիւղացիք այս կամուրջներէն որ մէկէն որ Ձէյթուն մտնէին, ձեւով մը՝ նոյն թաղի իշխաններուն կապուած էին: Գիւղացիք, նայած իրենց գերբին, ստիպուած տուեալ կամուրջներէն յարմարագոյնը պիտի ընտրէին: Այսպէս՝ Արեղէնցիք, Պաղ-Աղբիւրէն կ'անցնէին: Ասոնց համար տաժանելի, ժամանակի անշահ կորուստ պիտի ըլլար, միւս կամուրջներէն մէկը օգտագործելը, որով՝ աւելի կապուած էին Շօրվօղլեան իշխանին: Պարազան նոյնն էր բոլոր գիւղերուն համար ալ:

Բ. ԴԱՍԱԿԱՐԳ

Ինչպէս բոլոր հասարակութեանց, նոյնպէս Ձէյթունի մէջ ալ կային շերտաւորումներ, իշխաններն ու անոնց գերդաստանները, աւագանին, առետրականներ, հանճատէրեր, կալուածատէրեր, հօտատէրեր, արհեստաւորներ, շինականներ եւ կղերականներ: Ձէյթունի պատմութեան ողջ տեւողութեան այս շերտաւորումներուն դասակարգերուն միջեւ որեւէ հակամարտութիւն, վէճ ու դժգոհութիւն չէ եղած: Քանի որ բռնատիրութիւն, հարստահարութիւն, եւ շահադործում չէ պատահած: Կղերական դասը կը բաղկանար քահանաներէ եւ եկեղեցւոյ աւելի համեստ սպասաւորներէ: Անոնք ալ իրենց աշխարհիկ զբաղումները կ'ունենային: Գիւղերու քահանաները մասնաւոր տարազ ալ չունէին: Ամէն թաղ ունէր իր եկեղեցին: Ամէն մէկը անկախ, ուղածին պէս կը վարէր իր գործերը: Ձէյթունի մօտ Ս. Աստուածածնայ վանքը, բոլոր զէյթունցիներուն կողմէ մօլորազատուր, հօր պաշտպանը կը նկատուէր քաղաքին:

վանահայրը, կղերական դասուն իշխանը կը նկատուէր, սակայն չէր միջամտեր միւս եկեղեցիներու ներքին գործերուն: Զէյթուն ռազդակի կապուած էր Սսոյ աթոռին: Զէյթունցի պատգամաւորներ մեծ կշիռ ունէին Սսոյ կաթողիկոսական գործերուն մէջ, եւ ընտրութեանց առիթով առաջինը նկատի կ'առնուէր զէյթունցիներու տեսակէտը: Վանահայրն ու ամբողջ կրօնական դասը սիրով կ'ընդունէին իշխաններուն կարգադրութիւնները: Զէյթունցիք խիստ բարեպաշտ, կը յարգէին կղերականներուն կարգը եւ բժախնդրութեամբ կը կատարէին եկեղեցական բոլոր կանոնները:

Գ. ՌԱԶՄԱԿԱՆ ՈՅԺԸ

1) Զէմֆ եւ ռազմամքերֆ.— Պռիտի երկաթէն, զէյթունցի վարպետ զինագործներ կը շինէին հրացաններ, ատրճանակներ, դաշոյններ, սուրբեր եւ ռազմական այլ գործիքներ: Նոյնքան հմտութեամբ կը պատրաստէին ամենէն ընտիր վառօղը, կապարը դուրսէն կ'ապահովէին, եւ ռազմած մեծութեամբ զնդակները տեղւոյն վրայ կը ձուլէին:

2) Ռազմիկներ.— Զէյթունցիք մանուկ հասակէն կը վարժուէին ամէն տեսակ զէնքերու գործածութեան: Անոնք չարքաչ եւ անվախ կը մեծնային: Ամէն կողմ ազատ համարձակ կը շրջադայէին: 10-12 տարեկան պատանի մը, մանչ կամ աղջիկ, օրուան որեւէ մէկ ժամուան, 2-3 ժամ հեռու այգին, պարտէզը կամ որեւէ տեղ, առանձինն կ'երթար, կու դար: Երկիւղը զէյթունցի պատանիին համար աններելի մեղք էր: 20-21 տարեկան երիտասարդը Զէյթունի շուրջ բոլորը, ծառերը, թուփերն ու քարերը ափին պէս դիտէր: Զէյթունցիներու ամենէն սիրելի զբօսանքը որսորդութիւնն ու լողալն էր: Անոնք օրերով կը քալէին: Եղնիկներու պէս արագ ու ճկուն կը մարջնէին անմատչելի նկատուած ժայռերն ի վեր: Առողջ եւ տոկուն էին: Կռիւներու պահուն ինքնակամ կը նետուէին ամենէն վտանգաւոր դիրքերը: Զէյթունցիին իտէալը հերոսանալն էր: Ժողովուրդը, այլ թէ կին կը պաշտէին հերոսները: Ընտանեկան կամ այլ հաւաքոյթներու ատեն կը փառաբանուէին հերոսները: Զէյթունցի պատանին, այսպիսի միջավայրի մը մէջ կը ներշնչուէր եւ կը ջանար ինքն ալ հերոս մ'ըլլալ:

3) Ռազմախան կազմակերպութիւն.— Դասական իմաստով կազմակերպութիւն չկար. ոչ ալ աւատապետական կամ ցեղախմբային ռազմիկներու յատուկ դասաւորում: Զէյթունցիին համար պատերազմիւր, առօրեայ զբաղումի պէս, բնական մէկ մասն էր կեանքին: Զէյթունցին, ինքնակամ, առանց բռնադատութեան կամ

ստիպումի կը նետուէր ռազմադաշտ: Դասակ, ջոկատ, պետ, հրամանատար եւ նման որակումներով աստիճանաւորներ չկային: Պատերազմի ատեն, եղբայրներ, հօրեղբորորդիներ, նոյն գերդաստանի կամ մօտիկ ազգականներու մարտիկներ, իրարու մօտ, կողք կողքի կը ճակատէին թշնամիին դէմ, այսպէսով նոյն թաղեցիները կարծես ուրոյն զօրասիւն մը, որոշ գիծ մը կը բռնէին ճակատին վրայ: Ծակատամարտի պահուն, պարազային համեմատ, յարձակումի կամ պաշտպանողականի պարազային աւելի փորձառու եւ գերդաստանի երէց անդամին ցուցմունքներուն կը հետեւէին: Զինեալ մարտիկներուն հետ ռազմաճակատ կը դռնուէին բոլոր տղամարդիկ եւ պատանիներ: Այս վերջինները վերաւորները թիկունք փոխադրելու, վերաւորները կամ նահատակները փոխարինելու, տեղական հրացանները լեցնելու, հրահանգներ փոխանցելու, ուտելիք հասցնելու կը ծառայէին: 15 տարեկանէն վեր, մինչեւ 70 կամ աւելի տարեկան, ոտքը ձեռքը բռնող տղամարդիկ, ժողովուրդի բոլոր խաւերէն, ահադանդի առաջին կոչին, կը ձգէին անձնական ամէն գործ ու զբաղում, ու կը դիմէին ռազմադաշտ:

4) Պարէն եւ ռազմաթերթ.— Ամէն ընտանիք ինք կը հողար եւ կը հայթայթէր ղէնքերը, ռազմաթերթը եւ պարէնը: Իշխանական տուններն ու երեւելիները միշտ աւելի ղինամթերքի եւ պարէնի պաշար կ'ունենային, զոր պէտքին համեմատ կը բաժնէին թաղեցիներէն չունեցողին եւ Զէյթուն ապաստանած գիւղացի մարտիկներուն:

5) Թաղագիտութիւնն ու ռազմավարութիւնը.— Իարեբու փորձառութեամբ հաստատուած, երբ պատերազմը Զէյթունի սահմաններէն ներս ըլլար, իւրաքանչիւր թաղեցի, գերդաստան, գիտէր իր տեղը, ռազմագծին վրայ: Իշխանները անձամբ կը մասնակցէին մարտերուն: Պարազային համեմատ, տեղւոյն վրայ կը ճշդութեամբ գործողութեանց ընթացքը: Զէյթունցիք՝ լաւ ծանօթ տեղւոյն քար ու սարին, ժայռ ու ծերպին, ճկուն, արագաշարժ, յանդուգն եւ հնարամիտ, ճշգրիտ նշանառու, վարժ սուսերամարտիկ, միշտ ալ կրցած են գերազանց ոյժերու դիմադրել եւ յաղթել:

ՉԷՅԹՈՒՆՑԻ ԿԻՆԸ

Զէյթունի ընկերային կեանքին ջիղն ու առանցքը կիսն էր: Ընտանիքը սուրբ էր, ղեկավարը՝ տան տարէց տիկինն էր: Շատ էին ընտանիքներ, ուր 5-6 ամուսնացած եղբայրներ, հարսներն ու զաւակները, մէկ յարկի տակ, մէկ սեղանէն, կ'ապրէին խաղաղօրէն: Առ հասարակ, հարուստ թէ աղքատ, խօսքկապը օրօրոցէն կը սկսէր:

Աղջիկներուն ամուսնութեան տարիքը 14-15, տղայոցը՝ 17-18 էր։ Զէյթունցի կինը, մանկութեանը վարժուած կ'ըլլար տան եւ դուրսի աշխատանքներուն։ Կինը, իր բարեպաշտութեամբն ու ժուժկալ կեանքով, ներշնչարանը կ'ըլլար առաքինութեանց։ Զաւակներուն դաստիարակիչը, այլ մարդոց խթանը կ'ընէ էր։

Զէյթունցիք կը խորշէին դրսեցի կին առնելէ։ 1895 թ.ի պատերազմէն, մանաւանդ Օսմ. Սահմանադրութենէն ետք, դրսեցի կանանց հետ ամուսնութեան հոսանք մը սկսած էր։ Ասոր պատճառներէն մէկն ալ, Զէյթունի մէջ, մանչերու ծնունդին աղջիկներէն աւելի ըլլալն էր։ 1915 թ.ին, Զէյթունի անձնատուութիւնը դրսեցի կանանց ազդեցութեան, պարտուողականութեան վերադրուեցաւ։

Զէյթունցի կիներ չափազանց հերոսապաշտ եւ աւանդապահ, իրենց զաւակներուն եւ ամուսիններուն խրախոյսն էին։ Անոնք կ'արհամարհէին թուլամորթները եւ հեղնելով կ'ըսէին. «Գլխուդ կնկայ լաչակ կապէ»։

ՏՆՏԵՍԱԿԱՆ

Զէյթունի մէջ ընդարձակ, հարթ հողեր չկային։ Բայց բոլոր մատչելի հողերը, բլրակողերը, լեռնալանջերը, մեծ ու փոքր, նեղ հովիտները մշակուած էին։ Ամէն տեսակ պտուղներ, մանաւանդ խնձորն ու խաղողը շատ առատ էին եւ կը կաղմէին եկամուտի լաւ աղբիւր մը։ Զուրը, ակեր եւ առուակներ շատ էին։ Զէյթունի երկու կողմերէն անցնող գետակներուն վրայ կային բանջարանոց-ածոռներ։ Զէյթունի գետակին վրայ բացուած առուներուն ջուրը գետեզերքէն բարձր ածոռները կ'ողողէր։ Այս տեսակէտով խիստ յատկանշական է Էրէֆի ձեռակերտ ջրուղին։ Բանջարանոց ածոռները կիները կը խնամէին։

Կիւռեւտիւնի բերդին մօտակայ Բաւաղալի ցած ձորէն մինչեւ ձիւնադաղաթ Պեռիտը, այլազան կլիման, անտառներն ու արօտավայրերը, զուլալ ու պաղ աղբիւրները, խիստ յարմար էին խաշնարածութեան, որսորդութեան, փայտամշակութեան։ Պեռիտի փէշերուն, Ալա Զայրիի, Եօթնաղբիւրի ձիւնամբժ արօտավայրերուն, անհամար ոչխարի հօտեր կը բերէին Իրաքէն եւ Սուրիայէն։ Օսմ. Սահմանադրութենէն ետք, այս գործը շատ լաւ ընթացքի մէջ էր։ Տեղացիները՝ այծերու աւելի կարեւորութիւն կու տային։ Լեռնոտ ու մացառուտ միջավայրը աւելի յարմար էր եւ շահաւէտ։ Զէյթունի եւ շրջակայ գիւղերուն մէջ կային բիւրաւոր այծեր։ Պնդողներ կան, թէ այծ (արամբերէն ուլն) — Ուլնիա անունը ասկից ծագում առած է։ Այս հարուստ շրջապատին մէջ կային հարիւր տեսակէ աւելի վայրի

պտուղներ, բոյսեր, արմատներ, որոնք տարուան բոլոր եղանակներուն կը ճոխացնէին հարուստին եւ աղքատին սննդացուցակը: Զէյթունցիները, այրերն ու կիները խիստ աշխատասէր էին: Նոյն- լակ բարձր դասու իգական սեռը, պատիւ կը նկատէր ածուններու եւ ալիքներու, մշակութեան, բերքահաւաքի, այգեկութեի աշխատանքները: Զէյթունցի ամէն տղամարդ ղերութեամբ կը գործածէր ուրազն ու սղոցը, մուրճն ու մանգաղը, կացինն ու յօտոցը, բահն ու բրիչը: Գրեթէ ամէն ընտանիք, իրեն պէտքերուն բաւարարանջարանոց, այգի, պտղատու ծառեր, կաթնտու կենդանիներ եւ հաւաղիկներ ունէր: Միջակ դասակարգը դրացի թուրք գիւղացիներու հետ արմտիքով կը փոխանակէր իր հասոյթներուն յաւելեալ մասը: Հարուստներ, եկամուտին աւելցածովը, մօտակայ թուրք գիւղացիներէն կալուածներ կը գնէին: Զէյթունցին, պտղէն զատ, որեւէ տուրքէ զերծ, կը վայելէր իր արդար վաստակին արդիւնքը, մինչեւ թուրք կառավարութեան հաստատուիլը: Զէյթունցին ողջ էութեամբ, արովեանական սիրով, կապուած էր հողին: Վաթանին, ջուրին զուրպան, անոնց սպառնացող թշնամիներուն դէմ իր ժայռերուն պէս անսասան, շուայտ ու շռայլ ապրելակերպի անվարժ, ուրոյն աշխարհահայեացքով ու նկարագրով, կուրծք էր տուած ահեղ փոթորիկներու, տոկացած, ու այդքան վերիվայրումներու մէջէն կրցած էր ազատուիլ ու պահել իր գոյութիւնը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Այս զօրաւոր տուեալներով, երբեք ալ սխալ չէ պնդել, թէ Զէյթունի առաջին բնակիչները, հայ ազգի կաղմաւորման շրջանին, հոն հաստատուած Հայաստան-Արմենական ցեղերու մնացորդներն են: Աշխարհագրական այս լեռնախորշին մէջ, Մերձաւոր Արեւելքի մէջ տեղի ունեցող զինուորական կամ դաղթականական տեղաշարժերու ընթացքին, հիւսիսէն հարաւ, արեւմուտէն արեւելք ու փոխադարձաբար, գլխաւոր ճամբաներէն դուրս, բնական բոլոր յարմարութիւններով օժտուած, կրցած են իրենց գոյութիւնը պահել, եւ հետըզհետէ, նոր եկուորները իրենց մէջ ձուլել: Այս տեսակէտին հաստատուն փաստն է գեղացեբէմը: Քանի որ հայ աշխարհի ուրիշ ոչ մէկ տեղ կը հանդիպինք գեղացեբէմի մասնայատկութիւններուն: Այս կը նշանակէ՝ թէ այդ լեզուն տեղական, մնայուն լեզու մըն էր: Մինչեւ որ հայերէն լեզուադիտութիւնը հակառակը փաստէ, ուրիշ մեկնութիւն կարելի չէ: Այս փնտռուածը նոր լոյս պիտի սփռէ, հայերէնի յառաջընթացին վրայ ալ: Արդեօ՞ք, զբաբարին գրական լեզու ըլլալէն առաջ, նոյն ընտանիքին կողքին, աշխարհաբար բար-

բառներ չկային, որոնք ժամանակի ընթացքին զարգացան: Գեղացիներէն ալ դարերու ընթացքին փոխուեցաւ: Գեղացիներէնի մէջ եղող օտար բառերը ա՛յդ կը վկայեն: Բայց լեզուին հիմնական կառոյցը նոյնը մնաց: Գեղացիներէնի ամենէն յատկանշականը «բ» գիրն է: Վերջ ի վերջոյ, գիտական համոզիչ բացատրութեանց կը կարօտի «բ»ին «յ» հնչուիլը, եւ «յ»ի չգոյութիւնը:

Արդէն քրիստոնէութեան առաջին դարերուն՝ Մարաշի եւ Ս. Փրկիչ վանքին մօտ հայերու գոյութիւնը կ'աւանդուի: Ուլնիա, Արեւիկ, Ընկուզակ, Այգեկակ, Կոմաղինէ, Ռուբինեաններէ առաջ հայեր կային: Հայ մատենագրութեան մէջ յիշուած Բերդն կամ Դղեակն քարձրը, Կիւռտինի բերդը ըլլալը ապացուցուած է: Դղեակ յորջորջումը կը նշանակէ թէ այդ բնական բերդին վրայ, ռազմական շինութիւններու կողքին կային նաեւ իշխանական, ընտանեկան պալատներ: Բերդը, դուցէ ունէր աւելի յարմար ճամբայ մը, որ ժայռերու եւ մացառուներու մէջ կորսուած կրնայ ըլլալ:

Հաւանաբար Գեղիմ առաջին բնակիչները, Պեռիտի հանքադործներն էին: Զմեռը, ձիւնապատ Պեռիտի վրայ, դործերու դարձումին, ամենէն մօտ այդ ձմեռանոցին մէջ կը մնային: Ենթադրեալ քաղաքը՝ Անէ, հեթական կամ հայասական Աստուծոյ մը աւանդով, հանքերէն շատ աւելի հեռու էր: Անէ քաղաքին մէջ կը բնակէին հանքատէրերը, որոնք երկաթը աւելի հեռուները կը տանէին: Անէ, աշխարհադրական դիրքովը, առեւտուրի եւ արհեստներու կեդրոն մը եղած ըլլալու է: Անի ձորը, Անէ քաղաքի ստորոտէն, Ս. Փրկիչի ակերուն եւ քաղաքին աւելի մօտ, Զերմուկի տաք ջուրերով, կը սկսի: Անէի աւերումէն ետք, ներխուժողներու դէմ աւելի լաւ պաշտպանուելու մտահոգութեամբ, վերապրողները Գեղ տեղափոխուած են: Զէյթունի դարաւոր պատմութիւնը կը փաստէ այս ընտրութեան առաւելութիւնները:

Գեղը, երկու կողերէն հոռոզ դետակներու եռանկիւնին ծայրը հաստատուած, ինքնապաշտպանութեան շատ մը առաւելութիւններ ունէր: Գեղին տունները, Պաղ Աղբիւրի դէմ, ձորակին միւս կողմը կը դառնուէին: Հանքադործներու այս պոլտիկ աւանը հետզհետէ դետակին եղբրքն ի վեր, աջ ու ձախ ընդարձակուեցաւ: Պաղ Աղբիւրին անմիջական մօտիկութիւնը, տուններուն շինուածքը կը փաստեն, թէ առաջինը Շօրվօղլեան թաղն էր, որպէս հանքերու աշխատաւորներու ձմեռնայի աւան: Ապա, դէպի ձախ, միջեւ Շուղրիի կամուրջը՝ քաղաքի ընդարձակուելով, կաղմուեցաւ Եաղուպեան թաղը: Շօրվօղլեան եւ Եաղուպեան թաղի իշխանները, հաւանաբար Անէի ազնուականներէն էին, որոնք Գեղին մէջն ալ իրարու դրացի, մինչեւ վերջ պահեցին իրենց մտերմութիւնը: Երկու թաղերը միասնա-

բար կը կոչուէին Նիֆէ քող, Ներքեւի, Վարի թաղ: Աւելի վերջը հիմնուեցաւ Նոր Աշխարհեան—Աբարթեան թաղը, հաւանաբար չբռնի իշխաններէն մէկուն իր մարդոցմով հոն հաստատուելովը: Վարի թաղին եւ այս վերջնոյն միջեւ եղած պարապ դօտին, հետադային շինուած խանութներով (երկար շուկայ մը), որպէս սահման կը ճանչցուէր: Շուկայէն դէպի վեր, մինչեւ Գար—Ծայր, եւ դէպի աջ, մինչեւ Պօղոս—Պետրոսի դետեղերքը, այս թաղն ալ ընդարձակուեցաւ, դրաւելով տրամադրելի տարածութիւնը: Ինչպէս Վարի թաղին տունները, դետեղեքէն դէպի վեր, առաջին տան տանիքը, երկրորդին բակը, մինչեւ Շուկայ կը հասնի, նոյնպէս ալ Վերի թաղին տունները, շուկայէն սկսելով, մինչեւ Գար—Ծայր կը բարձրանան:

Ամենէն վերջ հիմնուեցաւ Բասիլոսեան—Սուրէնեան թաղը: Հաւանաբար Բիւզանդացւոց իշխանութեան օրերուն, քաղաքին կառավարիչը, բերդին բարձր դիրքը նկատելով, հոն հաստատուեցաւ բնակութեան յարմարութենէն աւելի, դիրքին բարձրութեան պատճառով, հեղինակութիւնը շեշտելու մտօք, բան մը որ սովորական է արեւելեան երկիրներու մէջ: Կառավարիչին հետ եկող պաշտօնեաներն ալ, բերդին ստորոտը, Վարի թաղին վերեւ, Ս. Սարգիս եկեղեցւոյ կողմը, եւ Ս. Աստուածածին եկեղեցւոյ կից շինեցին տունները: Ս. Սարգիս եկեղեցւոյ յունական արձանադրութիւնները այս կը վկայեն: Անկէ ետք, այս թաղը ընդարձակուեցաւ դէպի հիւսիս արեւմուտք: Այս թաղին շինութեան ձեւերը, նախկիններէն բոլորովին տարբեր են: Միւսներուն բաղդադամբ աւելի արդիական: Մեր օրերուն ալ քաղաքը միայն այդ կողմէն ընդարձակուելու հնարաւորութիւն ունէր: Ամենէն արդիական, քաղքենի, երկյարկանի ընդարձակ տուններն ալ թաղին ծայրամասէն, դէպի Նահատակաց աղբիւրի կողմերը կը շինուէին: Անկէ անդին ալ մինչեւ Աղբիւրը, աւելի անդին մինչեւ Նահատակաց կամուրջը եւ մինչեւ վարը՝ դետեղերք բաւական տարածութիւն կար: Հոն գտնուող ածուներն ալ կը պատկանէին նոյն թաղեցիներուն:

Գիւղ կամ քաղաքի շինութեան համար, ամենէն կարեւորը ջուրին, մանաւանդ խմելիք ջուրին հարցն էր: Գեղին ջուրը գտնուող, ամենէն առատ, պաղ ջուրը Պաղ—աղբիւրինն էր: Ծօրվօղլեան եւ Եսողուպեան թաղեցիք, այս աղբիւրին ջուրը կը խմէին, զայն փայտեայ կուժերու մէջ փոխադրելով: Աբարթեան—Նորաշխարհեան թաղեցիք՝ Պօղոս—Պետրոս աղբիւրէն, իսկ Սուրէնեան թաղեցիք Նահատակաց աղբիւրէն կը կրէին խմելիք ջուրը: Մաքրութեան եւ այլ պէտքերու համար կը գործածուէր Շուղր դետակին ջուրը, որ Նահատակաց կամուրջէն աւելի վեր բացուած ջրանցքով մը կը հոսէր մինչեւ Գար—Ծայրին ստորոտը, ու անկէ վար կը բաժնուէր ամ-

բողջ քաղաքին: Բոլոր թաղերու մէջէն անցնող այս առուակներէն ամէն ընտանիք դիւրութեամբ կը հոգար իր տէտքերը: Մինչ Բասի-լոսեան—Սուրէնեանները միշտ ջուրի տագնապ կ'ունենային: Զրկիւր սպասաւորներ՝ բերդին ստորոտէն, Պէզնաղբիւսէն (պաղարի, շուկայի աղբիւր) առօրեայ գործածութեան, իսկ Նահատակաց աղբիւրէն ալ խմելիք ջուր կը փոխադրէին բերդը:

Զէյթունի հասութեաբեր կալուածները — այգի, արտ, մրգաստան, բանջարանոց — կը պատկանէին առաջին երեք թաղեցիներուն՝ Ծօրվօղլեան, Եաղուպեան, Նորաշխարհեան, ու ժլատ հողերը մնացած էին Սուրէնեան թաղեցիներուն: Այս շատ զօրաւոր փաստ մըն է, թէ Սուրէնեանները ամենէն վերջ հաստատուած են: Այսպէս՝

Շէմպէք լեւան, Զէյթունի կողմի փէշերուն կային Տէօկիւշին ձոր (կուռի ձոր), Տափըն ձիոյ (Տափակ ձոր), Անի ձիոյ (Անի ձոր) բաւական երկայն ու լայն ձորամէջերը: Այստեղ կային ընդարձակ այգիներ, ուր կը մշակուէին այլազան խաղողներ: Ասոնցմէ կը պատրաստէին ուռպ, չամիչ և խաղողի հիւթէն տեսակ տեսակ քաղցրեղէններ: Ասիկա մեծ հասոյթ ու եկամուտ կ'ապահովէր տէրերուն: Այս արտադրութեանց յաւելեալ մասը կը ծախէին մօտակայ թուրք գիւղերուն եւ գիւղաքաղաքներուն: Քաղաքին դիմացը, հարաւային կողմը, Սաղըրէն մինչեւ Անի ձորի բլուրները, Զանազայէի փոքր արտերուն մէջ կը մշակէին ոսպ, սիսեռ, ցորեն եւ այլ արմտիք: Այս բոլորը կը պատկանէին Ծօրվօղլեան թաղեցիներուն:

Զէյթունի արեւմտեան կողմը, Սօլաք Տէտէ լեւան լայն եւ հարթ դառիթափին վրայ, կային ընդարձակ մրգաստաններ եւ բանջարանոցներ: Լեւան կուրծքէն կը բխէր պաղ ու զուլալ, առատ Ակը: Ակի ջուրերով կ'ոռոգէին մինչեւ Ծուղրի գետեղերը իջնող պարտէզներն ու ածուները: Հոս կը մշակէին ամէն տեսակ ընտիր պտուղներ, մանաւանդ քաղցրահամ, անուշաբոյր կարմիր խնձորներ: Երջակայ թուրք գիւղացիք եւ քաղաքացիք մօլի էին այս պտուղներուն: Թարմ կամ չորցուած, եկամուտի լաւ աղբիւր մըն էր: Ակէն անդին, Հարամ աղբիւրէն մինչեւ Անտոլայ գետակին եղերքը կային հասութեաբեր այգիներ: Այս բոլորը, Սօլաք Տէտէյի բոլոր մշակելի բերրի հողերը կը պատկանէին Եաղուպեան թաղեցիներուն:

Քաղաքին արեւելեան կողմը, Պերզնկա ժայռալեւան ստորոտը շինուած էր Ս. Աստուածածնայ Զէյթունի պաշտպան ու պահապան ամրանիստ վանքը: Անոր քովէն կը բխէր պաղ ու առատ Բալգինց աղբիւրը: Վանքէն մինչեւ Պօղոս—Պետրոսի ձորը, լայն բացուածքին վրայ կային զմայելի պարտէզներ: Հոն կը մշակուէին ամէն կարգի համադրած ընտիր պտուղներ ու բանջարեղէններ: Վանքէն մինչեւ Սաղըր, բլրակողերուն վրայ կային փոքր արտեր, Արէ-

Ֆէլի ջրանցքին սկիզբէն մինչեւ Գար-Ծայրի փէշը կային ածուներ, այս բոլորը կը պատկանէին Նորաշխարհեան թաղեցիներուն:

Ամենէն վերջ հաստատուած Սուրէնեաններուն ոչինչ մնացած ըլլալով, անոնք Նահատակաց աղբիւրի առջեւն ու երկու կողմերը, մինչեւ գետեղերք իջնող քարոտ դառիթափը, ածուներ շինած էին, որոնց բերքը հազիւ իրենց պէտքերուն կը բաւէր: Նահատակաց կամուրջէն ցից դէպի վեր, Ծիրէքի կատարը, Գարին գլուխը, փոքր սարածութեան վրայ դռնուող այգիները, Բասիլոսենց կը պատկանէին: Անկէ Տաղն ի վեր, Ժիր հողերը, Թէպէտեւ անյարմար այգիներու համար, Սուրէնեան թաղեցիք հոն այգիներ տնկել սկսած էին: Կամուրջէն դէպի հոսանքն ի վեր, գետեղերքի նեղ հողերուն վրայ կային քանի մը պարտէզներ: Ժայռոտ այս պարտէզներուն մէջ կային դարաւոր հսկայ ընկուզենիներ, որոնց բերքին մեծ մասը հաւաքել շատ դժուար կ'ըլլար: Գետը կը թափուէր, կամ խոշոր քարերու միջեւ կը կորսուէր:

Պեռիտի երկաթահանքերուն մեծ մասը Ծորվողեան թաղեցիներուն կը պատկանէր: Կ'ըսուէր, թէ այդ թաղէն՝ Պալճեանենք, երկաթի փոխարէն դանձուած ոսկի դրամները, Էօլչէֆով (ցորենի չափ) կը չափէին: Մնացած մասն ալ Նորաշխարհեաններուն էր: Սուրէնեանենք ամենէն վերջ սկսած էին քանի մը հորեր աշխատցնել: Զինադործութիւնը առաջ շատ դարգացած էր Ծորվողեանենց թաղը: Այս արհեստին շահէն հրապուրուած, վերջերս՝ տարբեր քաղաքներէ Զէյթուն եկածները, բնակութեան եւ արհեստանոցներու համար միւս թաղերուն մէջ պարապ հողամաս չկարենալով գտնել, ստիպուած, մեծ շուկային ծայրամասէն, դէպի Պաղարի աղբիւր, խանութներ շինել, եւ Սուրէնեան թաղին ծայրերն ալ տուններ շինել սկսած էին: Մեր օրերուն, դարբիններու խանութներուն մեծ մասը, շուկային այդ բաժնին մէջն էր: Գուցէ ասոր համար է, որ Սուրէնեան թաղեցիք արհեստաւոր, աւելի քաղքենի էին:

Զարմանալի է որ ոմանք Զէյթունը ամառանոց նկատած են: Ընդհակառակը՝ խոր ձորի մէջ, առաջին երեք թաղերը ճիշդ արեւին դիմաց, արեւմտեան կողմի բարձր լեռները՝ ամառնային հովիտներուն դէմ պատնէշ, քաղաքը այնքան հեղձուցիչ տաք կ'ընէր, որ թաղեցիները քաղաքէն դուրս կ'անցընէին ամառը: Ծորվողեանենք՝ իրենց կայուածներն ու այգիները, Եղուպեանենք՝ Ակին ստորոտը, զովաշուք մրգաստանները, Նորաշխարհեանները՝ վանքին շուրջն ու ձորը, հովասուն դալար պարտէզները կ'երթային: Այս երեք թաղերուն մէջ դրեթէ ընտանիք չէր մնար: Ճարահատ, Սուրէնեանենք, հազիւ կէսօրն անցած ու շուքերը երկարիլ սկսած, կը թափէին Նահատակաց կամուրջին մօտ, Ճըռազօն գետաւազանը, լողնալու եւ

բարձր ժայռերու շուքին պատսպարուելու, կամ ալ՝ կամուրջին մօտակայ հսկայ ուռենիներուն եւ դէպի վեր՝ Կէյիկոնց պարտէզներու լայնաճիւղ ընկուզենիներուն տակ մինչեւ ուշ երեկոյ զովանալու համար:

Յարդ՝ պատմագրութեան ծանօթ «Զէյթուն» անուան առաջին յիշատակութիւնը կու գայ 1049 թ.ին, Ս. Աստուածածնայ վանքին մէջ գրուած Մաշթոցի յիշատակարանէ մը:

Զէյթունի մասին հրատարակուած վերջին գիրքին հեղինակը, Հ. Պօղոսեան (Զէյթունի Պատմութիւնը (1049-1921) Երեւան, 1969), 1049 թ.ը սկզբնական թուական կը նկատէ Զէյթունի պատմութեան համար:

Զէյթունի Պատմագիրքին (Պուէնէս Այրէս, 1960, Ա. մաս), Ա. գլուխին վերնագիրն է՝ 1375-1517, Մէմուրներ եւ Զիւլ Գատիրներ: Հոս (էջ 15) գրուած է վերոյիշեալ 1049 թ.ին գրուած յիշատակարանին պատճէնը: Այս գլուխին հեղինակը՝ Հայրենակից Նշան Պատանեան, այսպիսով Զէյթունի պատմութեան սկիզբը կը նկատէ 1375 թ.ը, Ռուբինեան Իշխանապետութեան անկումի տարին: Յաջորդական էջերուն մէջ, մինչեւ 59, 44 յիշատակարաններու լուստտիպ նմոյշները տպագրուած են, որոնց մեծ մասը գրուած է Ս. Աստուածածին վանքին մէջ, իսկ միւսները՝ հեռաւոր, տարբեր վանքերու մէջ: 1409-1760 թթ.ու միջեւ գրուած այս բոլոր յիշատակարաններուն մէջ Զէյթունը արձանագրուած է Զեքուն ձեւով:

Այդքանն ալ բաւական է Ս. Աստուածածնայ վանքին կարեւորութիւնը փաստելու համար: Անկարելի է որ այդ ամբաշէն, ընդարձակ վանքը, 1375 թ.ի փլուզումէն ետք, ցանուցիւր նորեկ Հայ դաղթականներու կողմէ շինուած ըլլայ, աղէտէն 34 (1375+34-1409) տարի ետք: Շատ ընական է, որ շրջանին մէջ բարգաւաճ Հայ կորիզ մը գտնուած ըլլալու է: (Յաւալի է որ Կիլիկեան Իշխանութեան անկումին յաջորդող մութ ու մռայլ տարիներէն սկսեալ մինչեւ մեր օրերը, կիլիկեան բոլոր վանքերէն, նոյնիսկ Սոսյ աթոռանիստ վանքէն աւելի դործօն եւ հռչակաւոր սրբատեղիին անունը, «Հայկական Կիլիկիա» դրքին մէջ չէ յիշուած իսկ. դեռ քանի մը տարիներ առաջ հրատարակուած այդ դրքին հեղինակը (Տոքթ. Յ. Տէր Ղազարեան) Զէյթուն գտնուած է: Ամէն տարի, Ս. Աստուածածնայ տօնին, հեղինակին Հայրենակիցները հարիւրներով ուխտի կու գային հոն ու մօտակայ Բալթենց աղբիւրի հսկայ ընկուզենիներու հովանիին տակ, օրերով կը մնային):

Դարեր շարունակ Հայ դպրութեան եւ մշակոյթի կեդրոն այս վանքը, դեղացիք իրենց պաշտպանն ու պահապանը կը նկատէին:

կրօնական երկիւղածութեամբ կը հաւատային, թէ որքան ատեն որ կանգուն է վանքը, կանգուն է նաեւ Գեղը: Թուրքը քանիցս փորձած էր դրակել զայն, բայց չէր յաջողած:

1915 թ.-ի Մարտին, թուրքեր սաստիկ ուժակոծումներով վանքին արտաքին հաստ պարիսպները քանդեցին: Մէջի մարտիկները դիշերանց դուրս խոյացան: Յաջորդ օր թուրքերը հրդեհեցին վանքը: Ապստամբութիւնը խեղդուեցաւ: Դանի մը շաբաթ ետք, քաղաքին բոլոր բնակիչները տարագրելէ ետք, զայն ալ այրեցին: Վանքը հրդեհուեցաւ, Զէյթուն այրեցաւ:

Ինչպէս որ ձիթենիի թուրքերէնը՝ գէյքումն (աղաքը) ըլլալուն, հետեւցնել թէ Զէյթունի շրջակայքը ձիթենիի շատ ծառեր դառնուած են եւ անունն ալ անկէ առնուած է՝ ծիծաղելի ըլլալու չափ անհեթեթ է, նոյնն է նաեւ պարագան Սէք անուն դատաւորի մը ակնարկելով, Սէթին երթանք, Սեթին, Զեթին, Զեթուն, Զէյթուն վարկածին: 1409 թ.-ին, հոն թուրքեր կայրն: Եթէ կային, բնականաբար անոնք թուրքերէն պիտի խօսէին, ու պիտի ըսէին, Սէք-է կիտէլիմ: Այս պարագային, Սէթի՝ Զեթուն ըլլալը, տառադարձութեան օրէնքներուն չի պատշաճիր: Եթէ հայերէն կը խօսէին, հայերը քաղաքին հիմնադրութեան օրէն ի վեր զայն Գեղ կը կոչէին:

Զէյթուն անուան ծագումը (ձիթենիին թուրքերէնը գէյթուն (աղաճը) ըլլալուն), եթէ ըստ այնմ պիտի մեկնաբանուի, կայ նաեւ, գեղացիներու կողմէ Այս Սօֆիա մզկիթին, որպէս ձէթի (գէյքումն եաղը) գին վճարուած տարեկան 15,000 դահեկան տուրքի պարագան: Մ. Սէմէրճեան այս հրովարտակին օսմաներէն պատճէնը տըպած է գիրքին մէջ, որը ստորագրած է Մուրատ 1618 թ.-ին (Հեճիրէ 1036): Հ. Պօղոսեան եւ ուրիշներ կ'առարկեն եւ Ֆէրմանին վաւերականութեանը կը կասկածին: Թուականը եւ ստորագրութիւնը կասկածելի ըլլան կամ ոչ, իրականութիւնը այն է, թէ գեղացիք մինչեւ վերջ (1862 թուականը), յենելով այդ առանձնաշնորհումին վրայ, չեն ուզած աւելի տուրք վճարել, ու քանի քանի անգամներ, տուրքին պատճառով, պատերազմած են թուրք փաշաներու դէմ:

Զէյթուն անուան ծագումին շուրջ տրուած բոլոր մեկնութիւնները գիտական չեն: Գուցէ, նոր լոյս ծագի եւ լուծուի այս հարցն ալ:

ՎԵՐՁԱՐԱՆ

Զէյթունցիներ կը նախընտրէին նոյն թաղեցիներուն հետ խնամիրական կապ հաստատել: Նախախնամութեան քմայքով, 1890-ական

Թուականներէն սկսեալ, մեր գերդաստանին եւ միւս թաղերու երեւելի գերդաստաններուն միջեւ խնամիական կապեր հաստատուած էին: Բասիլոսեան-Սուրէնեան իշխանական տոհմէն, Յակոբ աղա Բասիլոսեանը խորթ հայրս էր: Իրմէ մեծ, Պապ եւ Արթին աղաները, եւ իրմէ փոքր՝ Սարգիս էֆ. Բասիլոսեան չորս եղբայրները, ասոնց հօրեղբայրը՝ Ասատուր աղան, Բերդին կատարը, իրարու կից տուներու մէջ կը բնակէին: Պատանեկութեանս, յաջորդաբար մի քանի տարի, ամառուան արձակուրդներս անոնց տունը անցուցի: Այս առիթով բոլոր յարկաբաժիններու, եւ բերդին ծակն ու ծուկը սորվեցայ: 1915 թ.ի տարապրութենէն ետք, թուրքեր քաղաքը հըրդեհեցին: 1919 թ.ին երբ Զէյթուն վերադարձանք, մի քանի անգամ պտըտեցայ բերդին աւերակներուն մէջ:

1921 թ.ի ամառը, Զէյթունի երեք օրուայ պատերազմին, պաշարումէն դուրս ելողներուն հետ էի: Դէպի Փրանսական զբաւեալ դօտի, վեց օրէն հասանք Լեռնայ բերդին կիւմը, Կապանի մօտ: Հոն խումբը քայքայուեցաւ եւ կոտորակուած փոքր խումբերով վերադարձանք մեր հարազատ լեռները: 40-50 օր, մեծ ու փոքր խումբերով, բոլորս 140-150 հոգի թափառեցանք Զէյթունի եւ Փռնուզի շուրջ բոլոր լեռները: Մեր անցուղական առաջնորդին, Արամ Բէկի նահատակութենէն ետք, բոլորս հաւաքուեցանք Կիւռետինի բերդը, Ղուրայի կողմի ճամբայէն: Կաղզուրուելու, կրկին դէպի Փրանսական դօտի անցնելու համար, 7 օր մնացինք Կիւռետինի բերդը: Ամէն արեւամուտին, տղամարդիկս, նախապէս բացատրուած նեղ անցքէ կ'իջնէինք Արեգէնի թողլըուած արտերը, պաշար հաւաքելով, լուսաբացէն առաջ կը վերադառնայինք նոյն նեղ ու վտանգաւոր դռնէն՝ բերդ: Յերեկները առիթ գտնելով պտըտած եւ խուզարկած եմ բերդին ընդարձակ կատարը: Այնքան ապահով էր: Ըստ սովորութեան, միւս բոլոր կայաններուն դէշեր ու ցորեկ պահակ կը դնէինք, բայց Կիւռետին պահակի պէտք չունէր: Բացի իտալերէնէն, ցանկի մէջ յիշուած բոլոր գիրքերը ունիմ: Զանոնք խնամքով ուսումնասիրած եմ: Նոյնպէս հայ մամուլին մէջ Զէյթունի մասին գրուածները կարդացած եմ: Բոլորովին նոր տեսութիւններս դուցէ ոմանց շատ յանդուգն թուին: Բայց վստահ եմ, պիտի գտնուին այս անկողի արահետներէն ընթացող պատմաբան բանասէրներ ալ, մանաւանդ մայր հայրենիքին մէջ, ուր Զէյթունի ուսումնասիրութիւնը հետզհետէ աւելի զբաւիչ դառնալով կը զարգանայ: Զէյթուն աւերակ է. բայց տրուած տեղադրական անվիճելի փաստերը կան ու կը հաստատեն եզրակացութիւններս:

Կը մաղթեմ որ բոլոր Զէյթունի պատմութեամբ հետաքրքրւողները, ջանան ճիշդ ըմբռնել Զէյթունի հասարակական ընկերա-

յին իւրապատուկ կառոյցը եւ ըստ այնմ մեկնաբանեն զայն: Դաւանաբանական, զաղափարախօսական, քաղաքական, տնտեսական, ռազմազինական ընկալեալ տարազները չեն պատշաճիր Զէյթունի: Սուլորական չափերու վրայ ձեւուած պատրաստի հազուատները չեն յարմարիր զէյթունցիներու:

Վստահ եմ բոլոր հայրենակիցներս, ինծի պէս, երախտապարտ պիտի մնան, ինչպէս անցեալին, ասկէ ետքն ալ Զէյթունի մասին զրոյշ բոլոր գրիչներուն: Այդ գրիչները, Զէյթունի մասին գրելով, նպաստած պիտի ըլլան հայազինութեան:

ԶԵՅԹՈՒՆԻ ՄԱՍԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԱՄ ԳԻՐՔԵՐ

Աղասի (Կարապետ Թուրսարգիսեան), Զէյթունի Պատմութիւնը, Փարիզ, 1879: Գրուած՝ Նուպար Փաշայի յանձնարարութեամբ: Նոյնը՝ Քրանսերէնի Թարգմանուած Արշակ Զօպանեանի կողմէ: Փաշայի ծախքով, երկուքն ալ նոյն տարին լոյս տեսած են Փարիզի մէջ: Ապա՝ հեղինակը զայն վերամշակած ու ճոխացուցած, հրատարակած է 1938 թ.ին, Փարիզ: 1968 թ.ին, Փարիզի Հաճնոյ Հայրենակցական Միութեան նախաձեռնութեամբ, եւ հովանաւորութեամբ նոյն միութեան Միջին Արեւելքի Կեդր. Վարչութեան, կը վերահրատարակուի Պէյրութի մէջ (414 էջ):

Anatolio Latino, *Gli Armeni E Zeitoun*, 2 հատոր, Վիեննա, 1897 (700 էջ):

Մնացական Սեմերճեան, Զէյթունի Անցեալէն եւ Ներկայէն, Ա. մաս (Խրիմեան Հայրիկի օժանդակութեամբ), Վիեննա, 1900: Բ. մաս, Փարիզ, 1908: 1909 թ.ին Վաղինակ Բիւրատ երկու մասերը միասնաբար հրատարակած է Կ. Պոլիսի մէջ (264 էջ):

Կարապետ Տէր Յակոբեան, Յուշիկք Զէյթունի (խմբագիր՝ Մամիկոն Վարժապետեան), Մարզումն, 1912 (404 էջ):

Նազարէթ Զէյթունցեան, Զէյթունի Վերջին Դէպքերը (1919-1921), Աղեքսանդրիա, 1922 (240 էջ):

Վարդ Մեխակ (Վարդիվառ Գարանֆիլեան), Վերոյիշեալ գործին ամփոփումը հրատարակած է Կ. Պոլիս (117 էջ):

Վահէ Մխալեան, Ինֆանկիսագրութիւն Բարբոզիմէոս Մ. Վրդ. Թագաւանի, Նրուաղէմ, 1933 (332 էջ): Հրատարակութիւն Զէյթունի Հայրենակցական Միութեան:

Վ. Մէլիքսէթեան, Զէյթունի 1862-ի Ապստամբութիւնը, Երեւան, 1956:

Վ. Մէլիքսէթեան, Զէյթունի Հերոսամարտերը, Երեւան, 1960 (115 էջ):

Նշան Պատանեան, Արիւ Ահարոնեան, Զէյթունի Պատմագիրք, Պուէնէս Այրէս, 1960 (1149 էջ): Հրատարակութիւն Զէյթունի Հայրենակցական Միութիւն, Մոնթեվիտէօ:

Հայկազ Ս. Պօղոսեան, Զէյթունի Պատմութիւնը, Երեւան, 1969 (458 էջ):

Գր. Գալուստեան, Մարաշ կամ Գերմանիկ եւ Հերոս Զէյթուն, Նիւ Եորք, 1934:

Զէյթունի մտաւորականներէն՝ Սմբատ Բիւրատ, Յարութիւն Չազըրեան, Մ. Սիսեռեան, Եղուարդ Ոսկերիչեան (Տէր Մաշտոց Քհնյ.), Գէորգ Տէօվլէթ, Գրիգոր Գոտուրեան, Հայկազուն Արամեան, Լեւոն Նորաշխարհեան հրատարակած են գրքոյկներ, ալպոմներ, յօդուածներ:

Հայերէն, անգլերէն, Ֆրանսերէն, գերմաներէն եւ այլ լեզուներով, Հայ եւ օտար բանասէրներ՝ իրենց պատմադրական, աշխարհագրական, ազգագրական, քաղաքական եւ հասարակական աշխատասիրութիւններուն մէջ կարեւորութեամբ շեշտած են Զէյթունը:

Թուրք առօրեայ մամուլն ու պատմադրութիւնն ալ անդրադարձած է Զէյթունի դէպքերուն, զէյթունցիները ըմբոստ եւ անհնազանդ որակելով: Իսկ 1862 եւ 1895 թթ.ու պատերազմները թուրք պատմագիրները վերագրած են օտար գործակալներու եւ հայ քաղաքական կուսակցութիւններու՝ դոմիթէճիներու:

Դեռ նոր է որ կ'ուսումնասիրուին պետական, կաթողիկոսական, պատրիարքական դիւանները, հիւպատոսական ու միսիոնարական տեղեկագիրները:

Սմբատ Բիւրատի վէպերը՝ Ելլորգէն Սաաւն, Բանտէ Բանտ, Զէյթունի Վրէժը Սաւնայ Համար, Ստեփան Ալաճաճեանի՝ Եղեգեթը Զիւռնաքիւնցի վէպը, Զէյթունի դէպքերէն քաղուած են:

A SHORTER HISTORY OF ZEITOUN

ARAM SHORVOGHIAN

In the northeastern region of Armenian Cilicia, the rocky province of Zeitoun, which throughout the Ottoman domination kept its internal autonomy, has been the study subject of both Armenian and foreign scholars, who have attempted to present the various aspects of the historic past and the political and civic life of this part of Armenian occupancy. Despite these scholarly efforts, however, the remotest past of Zeitoun, the origin of this name, and other related matters remain shrouded. To elucidate the past history of Zeitoun, a study of the Zeitoun dialect may be conducive to a resolution of some of the knotty problems. The past life of Zeitoun presents its own peculiar picture, quite different from that of other regions, so that it is doubtful whether the use of conventional formulas to explain life in Zeitoun will prove to be fruitful. In 1915, the Turks destroyed and exiled the inhabitants of Zeitoun along with the entire mass of Western Armenians.

